

Մարզպետարանի դիմած քաղաքացիների դիմումների.

բողոքների 2015թ.-ի առաջին կիսամյակի ամփոփագիր

2015թ-ի առաջին կիսամյակում ստացվել է 712 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 530 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 515-ը, մերժվել՝ 10-ը, ընթացքի մեջ է 5 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 11 քաղաքացի, որից 4-ի խնդրանքը բավարարվել է, 6-ինը՝ մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 95 դիմումից դրական պատասխան է ստացել 87-ը, մերժվել է՝ 3-ը, 5 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով/:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 24 քաղաքացիներից 12-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 10 դիմում մերժվել է, 2 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 10 քաղաքացիներից 9-ը ստացել են դրական պատասխան, 1 դիմում ընթացքի մեջ է:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 13 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 12 քաղաքացիներից 10-ը ստացել են դրական պատասխան, 2 դիմում ընթացքի մեջ է:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել են 7 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 10 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Մեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ